

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ահավասիկ վերստին հնչեց խորհրդավոր ժամը, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից երջանիկ ենք Ձեզ ավետելու, թե «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Քրիստոսի հրաշալի Հարության ավետիսը ոչ միայն պատմական աշխարհասասան մի իրողություն է, այլ նաև կենդանի ապրում ամեն հայ քրիստոնյայի համար, ամեն տարի ավետվող միշտ նույն ցնծությամբ:

Արդ, սիրելի Սրբազան Եղբայր, բերկրյալ սրտով ողջունում ենք Ձեզ զատկական սուրբ ավետիսով և մաղթում, որ հարուցյալ Փրկչին շնորհները առատապես բաշխվեն Ձերդ Ամենապատվության, Սուրբ Աթոռիդ ուխտապահ միաբանության ու ժողովրդյան, հավասարապես բոլորին:

Մենք մնում ենք նաև աղոթող, որ բարին Աստված օգնության հասնի մեր տառապյալ ազգին այս օրերին և շուտով կարողանանք ողջունել Մայր Հայրենիքում և Արցախում առավոտը խաղաղության և արդարության:

Սրտանց հղում ենք Ձեզ Մեր եղբայրական սերը և գնահատանքը:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգվով:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեցուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակ-

ներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: